Արձանագրություն 3

ՀՀՄՆԳՀԾՁԲ-19/55 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	17.10.19թ.
	ժ.10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կարեն Սիմոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
	Արմեն Հակոբջանյան /գնահատող/
	Խորեն Մնացականյան /բացող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Աննա Սիմոնյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին

(Կ.Սիմոնյան)

1.1 «Հերմես» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն «Հերմես» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններին:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Կ.Սիմոնյան)

2.1 «Հերմես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

2.1.1 Ներկայացված Հավելված 3.2-ում հիմնական աշխատակազմում ներառված երկու աշխատակիցների գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը չի համապատասխանում հրավերով պահանջվող գործունեության ոլորտին և կատարած աշխատանքին:

3. Գնահատման գործընթացի կասեցման վերաբերյալ

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «Հերմես» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել մասնակցի կողմից փաստաթղթերի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան ս/թ հոկտեմբերի 23-ը, ժամը՝ 16:00 -ն, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց ս/թ հոկտեմբերի 21-ին, ժամը 16:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ հասցեում

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կարեն Սիմոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
	Արմեն Հակոբջանյան /գնահատող/
	Խորեն Մնացականյան /բացող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Աննա Սիմոնյան

5. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, հայտը գնահատելու և գնահատման արդյունքների մասին
(Կ.Սիմոնյան)

5.1 «Հերմես» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և կարգով շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

5.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «Հերմես» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/:

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Կ.Սիմոնյան //Նախագահ/

_____ Հ. Հովսեփյան

_____ Ա. Հակոբջանյան

_____ Խ.Մնացականյան

_____ Ա. Ստեփանյան

_____ Ա. Սիմոնյան/քարտուղար/